


ՆՇԱՆԱԿՈՐ  
ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ  
ԿՑԱՆՔԸ

Ա. ՊՈՒՄՈՎ



ԻՍՊԱՆԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ  
ԱՌԱՋՆՈՐԴԵԼ

ՊԵՏՏՐԱԾ

ԹՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԵՒ


Ն ՏԱՆԱՎՈՐ ԲՈԼՏԵՎԿԻԿՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ

Ա. ՈՍԻԹՈՎ

միջին յեզ բարձր տարիքի համար

**ԻՄՊԱՆԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ  
ԱՌԱՋՆՈՐԴԸ**

Ոռուստենից քարգմանեց  
Հ. ՀԱՅՐՈՒԹԵՑՅԱՆ



ԹԵՏՐԱՍ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԿԱՆԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1938

«Մեր Խողեն», «բանվոր դասակարգի հավատարիմ զավակ», «ժողովրդի բարեկամ»— այդպես են անվանում նրան իսպանիայում։ Խողեն Դիասի անունը թանդե իսպանական յուրաքանչյուր աշխատավորի համար, առելի՛ իսպանական յուրաքանչյուր ֆաշիստի համար։ Խողության առաջին որերին Մադրիդում մի դավադրություն բացվեց. այն մարդկանց ցուցակում, վորոնց պատրաստվում եյին սպանել ֆաշիստները, առաջինը նշանակված եր Խողեն Դիասը։ Իսպանական ժողովրդի թշնամիների կողմից այս պատվավոր առելությունը Խողեն Դիասը վաղուց ե ձեռք բերել։

Նա համեստ բանվոր-բուլկեգործ, մանկության ժամանակ բատրակ, դուրս ե յեկել պրոլետարական Սեվիլյայի ընդերքից, մի քաղաք, վորին ոռմանտիկ տրանսիցիան փառաբանել ե յեզների կոխվներով և արագաշարժ ֆիզարոներով։ Սակայն իսպանական պրոլետարիատի համար Սեվիլյան ուրիշ համբավ ունի. զա զասակարգային կատաղի մարտերի, հզոր գործադուլների ե բարիկադային կոխվների քաղաք ե։ Պատահական չե, վոր Փաշիստական խռովաբարներն ամենից առաջ հարձակվեցին այս քաղաքի վրա։ Պատահական չե, վոր նըրանք Սեվիլյան կողոպտելու տվին գաղանացած գահին և հարբած դեգեներատ կեյսոր դե Լյանոյին։ Այժմ Սեվիլյան վողոզված ե արյունով։ Հաղարավոր դիակներ վճարեց նա այն բանի համար, վոր մի ժամանակ այդ քաղաքն անվանում եյին կարմիր։

Կարմիր Սեվիլյա։ Նրա այս փառքն ստեղծել է Խողեն Դիասը։ Սեվիլյայի բանվորների առաջնորդը։

Դիտեցեք նրա գեմքը։ Քաջարի, հաստատուն հարցք։ Ծատ քիչսպիտակած սեմազերի շրջանակի տակ՝ բարձր, ուղիղ ճակատ։ Ամուր ու արտահայտիչ շար-



11-28405 9/1

ժում: Խելք և կամք, վոր արտահայտվում է նրա յուրաքանչյուր դիմագծի, յուրաքանչյուր շարժման մեջ: Էսոդե Դիասը կարծես մի պողպատի կտորից և ձուլված: Նա 42 տարեկան է: Յերեսուն տարի առաջ նա վարձուրանվոր դարձավ: Յեթե դուք ուզում եք իմանալ, թե ինչպես եր ապրում նա այն ժամանակ, հիշեցեք, թե Գորկին ինչպես է նկարագրում փուռը («Յ լույս»): Եյականն այն չե, վոր Գորկուն վիճակից տանջվել ուստական փուռմ, իսկ Դիասին՝ իսպանական. շահուգործումն ինտերնացիոնալ է իր ձեւրով, իր զազրելիությամբ:

Սակայն փուռը Դիասի համար դարձավ: Նա սովորեց սիրել և ատել. սիրել իր դասակարգային յեղբայրներին, իր նման կեղեքվածներին, իր նման իրավազուրկներին, ատել նրանց, ովքեր իրենից ու իր նման հազարավորներից խլել են յերիտասարդությունը, կյանքի ուրախությունը, ազատությունը: Հեղաշրջում կատարվեց տամներիու տարեկան յերեխայի դիտակցության մեջ, վորն ստիլված եր իր ձեռքերով ապրուստի միջոցներ վաստակել իր համար: Դասակարգային պայքարի ծշմարտությանը նա շուտ հասավ և իր ուսերի վրա փորձեց:

Աշակերտը վարպետ դարձավ, իսկ դժբոհը՝ հեղափոխական: Յերբ Հոկտեմբերյան վորոտի ճայթյուններն իսպանիա հասան, Խոզե Դիասը տեսավ, թե ինչպիսին պետք է լինի իր ճանապարհը, իսպանական ամբողջ պրոլետարիատի ճանապարհը: Կազմակերպություն և միասնականություն — ահա հաջողության գաղտնիքը: Նա այդ մարտական լոգունդ դարձրեց: Իսպանիայում, վորտեղ բանվորական շարժումը վազուց բաժան-բաժան եր յեղել անարխիստների և ուժորմիստների կողմից, միասնականության լոգունդն ամենահեղափոխական լոգունդն եր: Այդ լոգունդն անխուսափելիորեն տառնում եր դեպի բոլշևիզմը, վորովհետեւ միայն կոմո-

նիստներն եյին միասնականություն ուզում և պայքարում դրա համար:

Միասնականության համար պայքարում եր Խոզե Դիասը: Այդ լոգունդն ամենից շատ մռատիկ ե պրոլետարիատի սրտին: Դիասին վոչ միայն սիրեցին, այլև նրա մեջ տեսան առաջորդին: Նա արագ առաջ զնաց, դարձավ Սեվիլյայի պրոֆմիությունների ամենաժողովը զական զեկավարներից մեկը: Խոպանական պրոլետարիատը, վորի արյունն եր թափվել բանվորական շարժման մեջ ստեղծված պատակաման պատճառով, առաջնորդի դեր կատարելու համար առաջ ե քաշում միայն նրանց, ում համար թանգ և միասնականության դրոշը: Այդպիսին և Դոլորես Իբարրուրին: Այդպիսին և Խոզե Դիասը:

Կոմունիստները խոր ընդհատակում եյին: Նրանց ինքնահավան, սալբաֆոն Պրիմո դե Ռիվերան զատաստան տեսավ բանվորական շարժման դեմ: Կոմունիզմին համակըլու համար մահապատժի եյին յենթարկում: Կարելի յեր կողոպտել, սպանել, բռնանալ, ամեն տեսակ հանցանք կատարել, միայն թե դրանք ծածկվեյին «կոմունիզմի դեմ պայքար» անվան տակ: Բայց բողոքի հենց միայն մի խոսքի համար մարդուն կարող եյին սպանել, միևնույն ե՝ դատարանով, թե առանց դատարանի:

Կոմունիստները խոր ընդհատակում եյին: Նրանց միացան միայն ամենահամարձակ ու անվեհեր մարդիկ, միայն մեր դատակարդի լավագույն մարդիկ: Նրանց միացավ նաև Խոզե Դիասը. նա ուրիշ ճանապարհ ունենալ չեր կարող: 1925 թվին — այն ժամանակ 30 տարեկան եր — նա սկսեց աշխատել ՄՈՊՐ-ի շարքերում: Ֆաշիստական տեսուրի տարիներին ՄՈՊՐ-ում աշխատելու պետական հանցանք եր համարվում: Բայց դա պատճական նշանակություն ունեցող աշխատանքներ: Նա բարձրացնում եր մարտնչող հեղափոխականների վոգին, ամրացնում եր նրանց հավատը զեստի իրենց և իրենց դասակարգի ուժերը: Համերաշխության գաղափարն ան-

բաժանելի յե միանականության գաղտափարից։ Այդ պատճառով ել Դիասն այնքան ակտիվորեն նետվեց մովքական աշխատանքի մեջ։ Նրա համար այդ աշխատանքը մարտնչող պրալետարիատի ուժերի համախըմբման համար մղվող պայքարի մի մասն եր։

ՄՈՊՐ-ը Խոզե Դիասին հասցրեց կոմունիստական շարքերը։ Դիասը հասկացավ, վոր միայն կոմունիստներն են իսկապես պայքարում բանվոր դասակարգի շահերի համար և իսկապես կազմակերպում նրան։ 1927 թվից Դիասը կոմունիստ ե։ Նա կոմկուսակցության մեջ մտավ վո՛չ վորակես դիտող, այլ վորակես մարտիկ։ Թվով փոքրիկ, ընդհատակը մղված իսպանիայի կոմկուսակցությունը չեր հբաղուրում շաղակրատներին ու ռազորտունիստներին։ Նրա մեջ եյին մտնում միայն փորձված, համարձակ, պրոլետարիատին նվիրված մարդիկ։ Ավելի գյուրին եր գնալ անարխիստների մոտ, վորոնք պարձենում եյին իրենց ամենից «ձախ» Փրագով, բայց համերաշխ եյին ֆաշիզմի հետ։ Սակայն Դիասն իր շահերի մասին չեր մտածում, այլ՝ իր դասակարգի շահերի մասին։ Նա կոմունիստ դարձավ և արիարար կովի բռնվեց մեծանուն անարխո-սինդիկալիստների հետ, վորոնք բանվոր դասակարգին կոչ եյին տնում «Հրաժարվել քաղաքականությունից», այսինքն անապարհ զիջել ֆաշիզմին։

Այդ ծանր ժամանակ եր կոմկուսակցության համար։ Տեսորով ճնշված, արյունաքամ յեղած, խոր ընդհատակ մղված՝ նա կորցնում եր իր առանց այն ել փոքրաթիվ ուժերը, հատկապես Սեվիլիայում, վորտեղ տեսորը առանձնապես դաժան եր։ Հարկավոր եյին թարմ ուժեր, համարձակ մարդիկ։ Այդպիսի մարդ ե յեղել միշտ Խոզե Դիասը։ Նա նետվեց պայքարի հորձանքի մեջ և զրադվեց կուսակցության ջախջախված ուժերի համախմբմամբ։ Նա միանգամից դարձավ վոչ միայն մարտիկ, այլև հրամանատար։ Սեվիլիայի ընդհատակի կոմունիստները նրան իրենց զեկավարությունը ու հաստատուններից մեկն իսպանիայում։ Ամբողջ կոմիտեն ձերբակալված եր, կապերը խախտվել եյին, սակայն Դիասը կարողացավ բոլորն արագ վերականգնել։

Եկավարում եր տաղանդավոր կերպով— այդ բանը խոստովանեցին բոլորը։ Կարճ ժամանակամիջոցում կոմունիստների Սեվիլիայի կազմակերպությունը գուրծավ ամենախոշորներից ու հաստատուններից մեկն իսպանիայում։ Ամբողջ կոմիտեն ձերբակալված եր, կապերը խախտվել եյին, սակայն Դիասը կարողացավ բոլորն արագ վերականգնել։

Անցան ամիսներ, տարիներ։ Վրա հասավ 1931 թվի ապրիլյան հեղափոխությունը։ Իսպանիայի փոքրիկ կոմունիստական կուսակցությունը դուրս յեկավ ընդհատակից և նրա շարքերն արագորեն սկսեցին լրացվել։ Ընդհատակյա աշխատանքի տարբներին նրա անդամների թիվը հարյուրների յեր հասնում, իսկ այժմ սկսեց հաղարների հասնել։ Հեղափոխությունը չգոհացրեց պրոլետարիատին, չգոհացրեց գյուղացիությանը։ Ածում եր հեղափոխական նոր ալիքը։ Անդալուզիայի գյուղերում գյուղացիությունը խուլ պայքար սկսեց կալվածատերերի ու քահանաների դեմ։ Սեվիլիայում և Գրենադայում բանվորները գրավեցին ձեռնարկությունները։ 1932 թիվը լի յե մարտերով, հսկա հրդեհներով, բարիկադներով։ Կոիմներն ընդդրկեցին ամբողջ իսպանիան։ Այդ մարտերի մեջ առաջին տեղերից մեկն Անդալուզիան եր բռնում։ Իսկ Անդալուզիայում առաջինը Սեվիլիան եր։ Դիասն Անդալուզիայի բոլոր կոմունիստների ղեկավարն եր, ամենաժողովրդական մարդը Սեվիլիայում։ Յերբ Սեվիլիայում ընդհանուր գործադրուն սկսվեց, հանրապետական կառավարությունը գործադրութավորների դեմ զորք ուղարկեց։ Սկզբնական շրջանում հանդարտված ֆաշիստները ցույց տվին իրենց զիմքը, սկսեցին հարձակվել բանվորների վրա։ Դիասը Սեվիլիայի պրոլետարիատին պաշտպանվելու կոչ արեց։ Նա ինքն եր զեկավարությ բարիկադների կառուցումը, ինքն ել մասնակցում եր ֆաշիստական բանդաների և սպիտակ-գվարդիա») զորամասերի դեմ վարած կոիմներին։ Կոստիկանությունը բռնեց նրան ու բանտ նետեց։

— Դիասը գերության մեջ է, — այս լուրն ելեկ՝  
տրական հոսանքի պես տարածվեց ամբողջ Սեվիլիա-  
յում: Մեր Խողեն վտանգի մեջ է:

Սկսվեցին բռղոքի ցատումնալից ցույցեր: Կառա-  
վարությունն ամեն որ զայրուցիթի հարյուրավոր բա-  
նաձեռ եր ստանում: Վողջ բանվորական իսպանիան  
պաշտպան կանգնեց իր Դիասին: Կառավարությունն  
շտապում եր. ուղում եյին շուտով ազատվել կոմունիս-  
տական վտանգավոր առաջնորդից: Արագացրած դատա-  
րանը 18 տարվա բանտարկության վճիռ կայացրեց: Սա  
դանդաղ մահապատիժ եր:

18 տարվա բանտարկություն: Վո՛չ, իսպանիայի  
պրոլետարիատն իր առաջնորդներին այդպես հեշտու-  
թյամբ ռեակցիայի ճանկը չի գցում: Հուզմունքի ճայ-  
ներն սկսեցին ավելի հաստատուն դառնալ, ամեն մի  
բռպեն պայմանական եր սպառնում: Իշխանությունն զգաց,  
վոր դրությունը վտանգավոր ե դառնում: Նա բանվոր-  
ների ներկայացուցիչներին հայտնեց. — Հինգ հազար  
պեզետ, և Դիասը կազատվի յերաշխավորությամբ:  
Այլապես՝ 18 տարի:

Հինգ հազար պեզետը սոսկալի գումար ե բանվորա-  
կան չքավոր կազմակերպությունների համար: ԶԵ՞ վոր  
իսպանիան Յեվրոպայում ամենացածր աշխատավարձի  
յերկիրն է: Բայց Սեվիլիայի պրոլետարներն այնքան են  
սիրում Դիասին, վոր կարծ ժամանակամիջոցում, բա-  
ռացիորեն կոպեկ առ կոպեկ հավաքեցին այդ գումարը:  
Շատերը տալիս եյին իրենց վերջին ունեցածը: Հավա-  
քում եյին բոլորը՝ կոմունիստները, սոցիալիստները,  
անարխիստները: Սա պրոլետարական միասնական ճա-  
կատի մի փառավոր ցույց եր և Խողեն Դիասն արժանի  
յեր դրան, այն Խողեն Դիասը, վորն իր դասակարգի շա-  
հերի համար համարձակորեն դիմում եր զեպի տաժա-  
նակը ություն:

Բայց Խողեն Դիասի հաղթանակն ամենից առաջ կո-  
մունիստական կուսակցության հաղթանակն եր, պրո-  
լետարիատի միասնականության հերոս, անխոնջ մար-

տիկի հաղթանակը: Սեվիլիայի մարտերը կոմունիստ-  
ների շարքերը հազարավոր բանվորներ բերին: Սեվի-  
լիայի կոփիները ցույց տվին, վոր միայն կոմունիստ-  
ներն են ընդունակ զեկավարելու պրոլետարիատին՝  
նրա կենսական կարիքների, նրա ապագայի համար մըղ-  
վող պայքարում:

Այդ ժամանակից Խողեն Դիասի անունն իսպանիա-  
յում ամենաժողովրդական անուններից մեկն է: 1932  
թվից Դիասն իսպանական կոմկուսակցության քակ-  
բյուրոյի անդամ է, նրա գլխավոր քարտուղարը: Հա-  
մեստ բանվորը դարձավ իսպանական պրոլետարիատի  
առաջնորդը, միջազգային կոմունիստական շարժման  
ամենաժողովրդական գործիչներից մեկը, Կոմինտերնի  
Գործադիր կոմիտեյի անդամը:

Նրա հատուկ գծերն են — արիություն, կարգապա-  
հություն, կայունություն, միշտ պարզ կողմնորոշում  
պահելու և անհրաժեշտ վորոշումները հանդարտ ընդու-  
նելու կարողություն: Յեվ այս խոշոր հատկություննե-  
րըն այնպիսի մի յերկրում, ինչպիսին իսպանիան է,  
վորի արի ու հերոս պրոլետարիատին յերբեմն պակա-  
սում եր հենց կարգապահությունը: Դիասն իր հոգու  
արիությունը յերբեք չի կորցրել: 1934 թվի հոկտեմ-  
բերյան պատմական որերին Խողեն Դիասը պրոլետարիա-  
տին միասնականության համարձակ կոչ եր անում,  
բանվոր դասակարգի ուժերը մոբիլիզացիայի յեր յեն-  
թարկում հերոսական Աստուբիային ոգնելու համար:  
Յերբ Փաշիստական տեսորի շրջանն սկսվեց, նա հան-  
դարտ ու վստահ կուսակցությունը փոխադրեց ընդհա-  
տակը և ընդհատակում շարունակեց պայքարը պրոլե-  
տարիատի միասնականության համար:

Կոմկուսի այս աշխատանքի արդյունքները, վորի  
մեջ Խողեն Դիասին աչքի ընկնող տեղ և պատկանում,  
հայտնի յեն: Իսպանիայում աճեց ամրակուռ ժողովր-  
դական ճակատ, վորին զարնվելով ջախջախվում էն  
միջազգային Փաշիզմի ուժերը:

Կոմունիստական ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեյի նախագահությունն այսպես ե գնահատել իսպանական կոմկուսակցության գործունեյությունը:

«Կոմինտերնի Գործկոմի նախագահությունը հավանություն ե տալիս Խոպանիայի կոմունիստական կուսակցության զլխափոր գծին, վորը մորիլիքացիայի յե յենթարկում կուսակցության անդամներին և վողջ ժողովրդական մասսաներին՝ պայքարելու, Փաշիստների դեմ, վորոնք ձգտում են վոչնչացնել պառամենտական ռեժիմը և Փաշիստական դիկտատուրա սահմանել, Հավանություն ե տալիս դեմոկրատիկ պառամենտական հանրապետության պահպանման և կանոնավորման գծին, վորը յերաշխավորում ե խոպանական ժողովրդի, ժողովրդական ճակատի հանրապետության բոլոր իրավունքներն ու ազատությունները, վորի մեջ պետք ե ողը ցնդի Փաշիզմի տնտեսական բազան, վորի մեջ Փաշիզմը տեղ չի ունենա և ժողովուրդը կարող է ազատ հայտարերել իր կամքը և ինքը վորոշել իր վիճակը»:

\* \*

Այսոր Խոզե Դիասը վոչ մի ժամ հանդիսու չունի: Նա զեկավարում ե կուսակցությունը, համախմբում ե ժողովրդական ճակատը, բարձրացնում ե մարտիկների վոգին դիրքերում, կազմակերպում ե արտադրությունը թիկունքում, պայքարում ե տրոցկիստական հրեշների՝ Հիտլերի և գեներալ Ֆրանկոյի այդ Փաշիստական դործակալների դեմ:


Դիասը գրում ե կոչեր և հոգվածներ, արտասանում ե կրակոտ ճառեր և քլունգը ձեռքին աշխատում ե Մադրիդի պաշտպանության համար կազմակերպած շարաթորյակներում:

Նա ըստամենայնի այնպիսին ե, ինչպես նրան ըստեղուղ խոպանական պրոլետարիատը, ինչպես նրա զեղավարած Խոպանիայի հերսո կոմունիստական կուսակցությունը: Յեզ յեթե այդ կուսակցությունը, վորը մի

ժամանակ բաղկացած եր մի բուռն համարձակ մարդկանցից, իսկ այժմ իր շարքերում 250 հազար մարդ ունի և տանում ե իր յետևից խոպանական ժողովրդի վիթխարի մասսան, ապա այդ ևս, անկասկած, Դիասի, այդ քաջարի հեղափոխականի, կայուն բոլշևիկի, Կոմինտերնի լավագույն մարդկանցից մեկի արժանիքն ե:

Խոպանական կոմկուսի կենտրոմի վերջին պլենումում Խոզե Դիասի տվածք փեկուցումն ըստամենայնի ցույց տվեց խոպանական պրոլետարիատի այդ նշանավոր առաջնորդին, վորին, ինչպես և հերոսուհի Դոլորես Խբարբուրիին, ճանաչում և սիրում են ամբողջ աշխարհի բանվորները:

— Մենք շատ զոհեր ենք տվել, — ասում եր Դիասը, — վորպեսզի հաղթենք պատերազմում: Պայքարը ծանր ե լինելու և յերկարատե: Բայց մենք կհաղթենք, վորովհետեւ պայքարում ենք վողջ մարդկության գործի համար: Մեզ իբրև որինակ ե ծառայում Խորհրդային Միությունը:



Պատ. խմբագիր՝ Ա. Արժեհնյան  
Թարգմ. Հ. Հալքապետյան  
Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան

Դավթիոսի լիտոգր. Ա. 4013. Հրատ 4365.

Պատվեր 15. Տիրաժ 4000

Թուղթ 62×94. Տպագր 1 մամ.

Մեկ մամուլում 24.480 նիշ. Հեղինակային 0.34 մամ.

Հանձնված և արտադրության 17 գեկտեմբերի 37 թ.

Ստորագրված և տպագրության 29 մարտի 38 թ.

Պետրաստի 1 տպարան, Յերևան, Լենլոնի փող. 65.

-20-

ՀՀ Ազգային գրադարան



NL0987291

17 ЯНВ 1939

21

11

ԳԻՎԵ 40 ԿՈՊ.

28705

С. ОСИПОВ  
Вождь Испанского  
пролетариата  
Газ Арм. ССР, Ереван, 1938